Վճարային քարտեր և Օվերդրաֆտ

Տեղեկատվական ամփոփագիր ֆիզիկական անձանց,
անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների համար

Հրապարակման ամսաթիվ՝ փետրվար, 2024

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Գործող պայմաններին ամբողջապես ծանոթանալու, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով այցելեք մեր ինտերնետային կայքը՝ www.hsbc.am, ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարեք +374 60 655 000 հեռախոսահամարով:

HSBC

Բովանդակություն

Կրեդիտային քարտեր 3

Վարկային գծի մարման կարգը 9

Միջազգային Visa Plus բանկոմատային քարտեր 10

Նշումներ 11

Օվերդրաֆտ 12

Վարկային գծի/օվերդրաֆտի տոկոսադրույքը 13

Տեղեկատվություն երաշխավորի համար 14

Կարևոր նշում 14

Վարկավորման անհրաժեշտ պայմանները 15

Պահանջվող փաստաթղթեր 16

Վարկային գծի/օվերդրաֆտի տրամադրում 16

Վարկային գծի/օվերդրաֆտի տրամադրման
վերաբերյալ դրական որոշման կայացման չափանիշներ 17

Վարկային գծի/օվերդրաֆտի տրամադրման
վերաբերյալ բացասական որոշման կայացման չափանիշներ 17

Կարևոր Նշումներ 18

Կարևոր տեղեկատվություն վարկային պատմության վերաբերյալ 19

Կրեդիտային քարտեր

Վարկային գիծ ունենալու հնարավորությամբ

Սակագներ և այլ պայմաններ	ԱրՔա Կլասիկ Քարտ	Մաստերքարտ Ստանդարտ Flexi Քարտ[1]	Մաստերքարտ Ստանդարտ Քարտ
Վարկային գծի ժամկետ	**Անժամկետ**		
Քարտի վերաթողարկման ժամկետ	**3 տարի**		
Քարտի արժույթ	ՀՀ դրամ		
Քարտի թողարկման վճար	**Վճար չի կիրառվում**		
Քարտային հաշվի սպասարկման ամսական վճար	**Վճար չի կիրառվում**		1 000 ՀՀ դրամ
Հավելյալ քարտի թողարկման վճար[2]	**Վճար չի կիրառվում**		
Հավելյալ քարտի սպասարկման ամսական վճար	500 ՀՀ դրամ	**Վճար չի կիրառվում**	500 ՀՀ դրամ
Վարկային գծի տարեկան անվանական տոկոսադրույք	18%	16%	18%
Վարկային գծի տարեկան փաստացի տոկոսադրույք	Սկսած 19.56%-ից*	17.23%	Սկսած 21.01% -ից*
Կանխիկացման վճար Բանկի բանկոմատներից և POS տերմինալներից, **ինչպես նաև Բանկի հետ համագործակցող այլ ֆինանսական կազմակերպությունների բանկոմատներից (ավելին)**	250 ՀՀ դրամ (յուրաքանչյուր գործարքի համար)	**Վճար չի կիրառվում**	
Կանխիկացման վճար ԱրՔա համակարգում գործող այլ բանկոմատներից և POS տերմինալներից կանխիկացնելիս	Կանխիկացվող գումարի 1.5%-ը (նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ)		

[1] **Մաստերքարտ Ստանդարտ Flexi քարտը տրամադրվում է միայն ֆիզիկական անձանց:**
[2] Հավելյալ քարտի սակագները կարգավորվում են հիմնական քարտի սակագներով:
* Տարեկան փաստացի տոկոսադրույքը չի գերազանցում 24%-ը:

Կանխիկացման վճար ԱրՔա համակարգում չներառված բանկոմատներից և POS տերմինալներից կանխիկացնելիս (ներառյալ արտերկրում կանխիկացնելիս)	Կանխիկացվող գումարի 2.5%-ը, նվազագույնը՝ 1 000 ՀՀ դրամ բանկոմատների դեպքում, նվազագույնը՝ 3 000 ՀՀ դրամ POS տերմինալների դեպքում	
Քարտից քարտ փոխանցում HSBC Հայաստանի կրեդիտային քարտերի միջև (ԱրՔա համակարգի միջոցով՝ www.arca.am)	Փոխանցվող գումարի 0.75%-ը	
Քարտից քարտ փոխանցում HSBC Հայաստանի կրեդիտային քարտից ԱրՔա համակարգի այլ վճարային քարտերին (ԱրՔա համակարգի միջոցով՝ www.arca.am)	Փոխանցվող գումարի 1.5%-ը	
Քարտի վերաթողարկման վճար	2 500 ՀՀ դրամ	5 000 ՀՀ դրամ
Քարտի անհատական ծածկագրի (ԱԾ) ապաբլոկավորման վճար	1 000 ՀՀ դրամ	
Իրական գործարքի ոչ ճիշտ վիճարկում	10 000 ՀՀ դրամ	15 000 ՀՀ դրամ
Քարտի վարկային սահմանաչափի մշտական կամ ժամանակավոր վերանայման վճար	**Վճար չի կիրառվում**	
SMS ծառայություն	**Անվճար**	
Ամսական քաղվածքի տրամադրում	**Անվճար**	
Քարտային հաշվի յուրաքանչյուր 1 ամսվա քաղվածքի կամ 1 ամսվա հաշվի պատմության մասին տեղեկատվության տրամադրում (եթե հայցվում է 6 ամսից ավել վաղեմության տեղեկատվություն)	3 000 ՀՀ դրամ[3]	
Կանխիկացման սահմանաչափ (օրական)	500 000 ՀՀ դրամ	
Կանխիկացման գործարքների առավելագույն քանակ (օրական)	3	

[3] Ներառյալ ԱԱՀ:

Գործարքների առավելագույն օրական ընդհանուր քանակ (ներառյալ կանխիկ և անկանխիկ գործարքները և մնացորդի հարցումները)	20		
Յուրաքանչյուր անկանխիկ գործարքի առավելագույն սահմանաչափ	1 000 000 ՀՀ դրամ	5 000 000 ՀՀ դրամ	
Քարտի կորստի դեպքում Հաճախորդի հնարավոր առավելագույն վնասի չափը քարտի կորստի մասին տեղեկացնելուց հետո [4]	Մինչև 25 000 ՀՀ դրամ		
Վարկային գիծն օգտագործելու դեպքում պարտադիր նվազագույն վճարի չափ	Վերջնական բացասական մնացորդի 10%-ը, (նվազագույնը՝ 5 000 ՀՀ դրամ)	Վերջնական բացասական մնացորդի 10%-ը, (նվազագույնը՝ 10 000 ՀՀ դրամ)	
Վարկային գծի սահմանաչափ[5]	100 000 - 500 000 ՀՀ դրամ	100 000 - 1 000 000 ՀՀ դրամ	350 000 - 1 000 000 ՀՀ դրամ
Արտոնյալ ժամկետ (անտոկոս վարկավորում)[6]	Առավելագույնը մինչև 45 օր (առավելագույնը 15 օր քաղվածքի ամսաթվից[7])	**Չի կիրառվում**	Առավելագույնը մինչև 45 օր (առավելագույնը 15 օր քաղվածքի ամսաթվից[7])

Վճարման ուշացման տուգանք	**Ժամկետանց գումարի 5%-ը, առավելագույնը՝ 20 000 ՀՀ դրամ**
Սահմանաչափի գերազանցման տուգանք	**Սահմանաչափը գերազանցող գումարի 10%-ը, առավելագույնը՝ 20 000 ՀՀ դրամ**

[4] Տես «Քարտային ծառայությունների տրամադրման պայմանների» 7-րդ բաժինը:

[5] **Տվյալ սահմանաչափերը կիրառելի են ֆիզիկական անձ Հաճախորդների համար:**

[6] **Արտոնյալ ժամկետ կիրառվում է անկանխիկ գործարքների դեպքում, և եթե քաղվածքում նշված վճարման ենթակա գումարն ամբողջությամբ ստացվել է Բանկի կողմից մինչև/կամ վճարման օրը:** Արտոնաշրջանի տևողությունը կարող է տարբեր լինել՝կախված թե ամսվա որ օրն է տվյալ գործարքը գրանցվել քարտային հաշվի վրա: Կրեդիտային քարտից կանխիկացում կատարելիս կանխիկացման պահից սկսած կանխիկացված գումարի վրա հաշվարկվում է տարեկան անվանական հաստատուն տոկոսադրույք՝ օրական կտրվածքով:

[7] Եթե քաղվածքի ձևավորման ամսաթիվը բանկային օր չէ, ապա քաղվածքը ձևավորվում է դրան հաջորդող բանկային օրը և ներառում մինչև այդ պահը կատարված գործարքները: Պարտավորության վճարման օրը կլինի Ձեր կողմից նախապես որոշված քաղվածքի տրամադրման օրվանից հաշված 15 օրացուցային օր հետո:

Սակագներ և այլ պայմաններ	Մաստերքարտ Ոսկի Քարտ	Մաստերքարտ Պլատինում Քարտ[8]	Մաստերքարտ World Black Edition Քարտ[9]
Քարտի արժույթ	ՀՀ դրամ		
Վարկային գծի ժամկետ	**Անժամկետ**		
Քարտի վերաթողարկման ժամկետ	**3 տարի**		
Քարտային հաշվի սպասարկման ամսական վճար	1 500 ՀՀ դրամ	3 000 ՀՀ դրամ	5 000 ՀՀ դրամ (2 000 ՀՀ դրամ STATUS հաճախորդների[10] համար)
Հավելյալ քարտի թողարկման վճար [11]	**Վճար չի կիրառվում**		
Հավելյալ քարտի սպասարկման ամսական վճար	**Վճար չի կիրառվում**		5 000 ՀՀ դրամ (2 000 ՀՀ դրամ, եթե հիմնական քարտապանը STATUS հաճախորդ է)
Վարկային գծի տարեկան անվանական տոկոսադրույք	18%		
Վարկային գծի տարեկան փաստացի տոկոսադրույք	Սկսած 20.28%-ից*	Սկսած 19.99%-ից	Սկսած 19.77%-ից*
Կանխիկացման վճար Բանկի բանկոմատներից և POS տերմինալներից, **ինչպես նաև Բանկի հետ համագործակցող այլ ֆինանսական կազմակերպությունների բանկոմատներից (ավելին)**	**Վճար չի կիրառվում**		
Կանխիկացման վճար ԱրՔա համակարգում գործող այլ բանկոմատներից և POS տերմինալներից կանխիկացնելիս	Կանխիկացվող գումարի 1.5%-ը (նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ)		

[8] Մաստերքարտ Պլատինում քարտի առավելություններին և դրա հետ տրամադրվող ծառայություններին ծանոթանալու համար այցելեք Բանկի ինտերնետային կայք՝ Մաստերքարտ Պլատինում վարկային քարտ | HSBC AM:

[9] Մաստերքարտ World Black Edition քարտի առավելություններին և դրա հետ տրամադրվող ծառայություններին ծանոթանալու համար այցելեք Բանկի ինտերնետային կայք ՝ Մաստերքարտ World Black Edition վարկային քարտ - HSBC AM:

[10] STATUS ծառայությունների փաթեթի մանրամասներին ծանոթանալու համար այցելեք Բանկի ինտերնետային կայք՝ www.hsbc.am:

[11] Հավելյալ քարտի սակագները կարգավորվում են հիմնական քարտի սակագներով:

* Տարեկան փաստացի տոկոսադրույքը չի գերազանցում 24%-ը:

Կանխիկացման վճար ԱրՔա համակարգում չներառված բանկոմատներից և POS տերմինալներից կանխիկացնելիս (ներառյալ արտերկրում կանխիկացնելիս)	Կանխիկացվող գումարի 2.5%-ը, նվազագույնը՝ 1 000 ՀՀ դրամ բանկոմատների դեպքում, նվազագույնը՝ 3 000 ՀՀ դրամ POS տերմինալների դեպքում		
Հրատապ տրամադրվող կանխիկ գումարի չափ [12]	—	մինչև 1000 ԱՄՆ դոլար	մինչև 2000 ԱՄՆ դոլար
Միջնորդավճար հրատապ տրամադրվող կանխիկ գումարի համար	—	50 000 ՀՀ դրամ	
Քարտից քարտ փոխանցում HSBC Հայաստանի կրեդիտային քարտերի միջև (ԱրՔա համակարգի միջոցով՝ www.arca.am)	Փոխանցվող գումարի 0.75%-ը		
Քարտից քարտ փոխանցում HSBC Հայաստանի կրեդիտային քարտից ԱրՔա համակարգի այլ վճարային քարտերին (ԱրՔա համակարգի միջոցով՝ www.arca.am)	Փոխանցվող գումարի 1.5%-ը		
Քարտի վերաթողարկման վճար	5 000 ՀՀ դրամ		**Վճար չի կիրառվում**
Քարտի հրատապ փոխարինում	_	75 000 ՀՀ դրամ	
Քարտի անհատական ծածկագրի (ԱԾ) ապաբլոկավորման վճար	**Վճար չի կիրառվում**		
Իրական գործարքի ոչ ճիշտ վիճարկում	15 000 ՀՀ դրամ		
Քարտի վարկային սահմանաչափի մշտական կամ ժամանակավոր վերանայման վճար	**Վճար չի կիրառվում**		
SMS ծառայություն	**Վճար չի կիրառվում**		
Ամսական քաղվածքի տրամադրում/առաքում ՀՀ տարածքում	**Վճար չի կիրառվում**		

[12] Հայաստանից դուրս կանխիկի հրատապ տրամադրման (2-24 ժամվա ընթացքում) կամ քարտի հրատապ վերաթողարկման համար (48 ժամվա ընթացքում) անհրաժեշտ է զանգահարել +374 60 655 000 Բանկի հեռախոսային կենտրոնի համարով կամ MasterCard® -ի աջակցման թեժ գծի +1 (636) 722 71 11 հեռախոսահամարով:

Քարտային հաշվի յուրաքանչյուր 1 ամսվա քաղվածքի կամ 1 ամսվա հաշվի պատմության (եթե հայցվում է 6 ամսից ավել վաղեմության տեղեկատվություն)	3 000 ՀՀ դրամ[13]		
Վճարման ուշացման տուգանք	**Ժամկետանց գումարի 5%-ը, առավելագույնը՝ 20 000 ՀՀ դրամ**		
Սահմանաչափի գերազանցման տուգանք	**Սահմանաչափը գերազանցող գումարի 10%-ը, առավելագույնը՝ 20 000 ՀՀ դրամ**		
Կանխիկացման սահմանաչափ (օրական)	Վարկային սահմանաչափի 50%-ը կամ 500 000 ՀՀ դրամ (որն ավելի մեծ է)		
Կանխիկացման գործարքների առավելագույն քանակ (օրական)	3		
Գործարքների առավելագույն օրական ընդհանուր քանակ (ներառյալ կանխիկ և անկանխիկ գործարքները և մնացորդի հարցումները)	20		
Յուրաքանչյուր անկանխիկ գործարքի առավելագույն սահմանաչափ	5 000 000 ՀՀ դրամ	10 000 000 ՀՀ դրամ	
Քարտի կորստի դեպքում Հաճախորդի հնարավոր առավելագույն վնասի չափը քարտի կորստի մասին տեղեկացնելուց հետո[14]	Մինչև 25 000 ՀՀ դրամ		
Վարկային գիծն օգտագործելու դեպքում պարտադիր նվազագույն վճարի չափ	Վերջնական բացասական մնացորդի 10%-ը, (նվազագույնը՝ 10 000 ՀՀ դրամ)		
Վարկային գծի սահմանաչափ[15]	500 000 - 3 000 000 ՀՀ դրամ	50 000 - 5 000 000 ՀՀ դրամ	1 000 000 - 10 000 000 ՀՀ դրամ
Արտոնյալ ժամկետ (անտոկոս վարկավորում)[16]	Առավելագույնը մինչև 45 օր (առավելագույնը 15 օր քաղվածքի օրվանից[17])		

[13] Ներառյալ ԱԱՀ:

[14] Տես «Քարտային ծառայությունների տրամադրման պայմանների» 7-րդ բաժինը:

[15] **Տվյալ սահմանաչափերը կիրառելի են ֆիզիկական անձ Հաճախորդների համար:**

[16] **Արտոնյալ ժամկետ կիրառվում է անկանխիկ գործարքների դեպքում, և եթե քաղվածքում նշված վճարման ենթակա գումարն ամբողջությամբ ստացվել է Բանկի կողմից մինչև/կամ վճարման օրը:** Արտոնաշրջանի տևողությունը կարող է տարբեր լինել՝ կախված թե ամսվա որ օրն է տվյալ գործարքը գրանցվել քարտային հաշվի վրա: Կրեդիտային քարտից կանխիկացում կատարելիս կանխիկացման պահից սկսած կանխիկացված գումարի վրա հաշվարկվում է տարեկան անվանական հաստատուն տոկոսադրույք՝ օրական կտրվածքով:

[17] Եթե քաղվածքի ձևավորման ամսաթիվը բանկային օր չէ, ապա քաղվածքը ձևավորվում է դրան հաջորդող բանկային օրը և ներառում մինչև այդ պահը կատարված գործարքները: Պարտավորության վճարման օրը կլինի Ձեր կողմից նախապես որոշված քաղվածքի տրամադրման օրվանից հաշված 15 օրացուցային օր հետո:

Մուտք օդանավակայանների բիզնես սպասասրահներ (Lounge Key)[18]	–	–	**Տարեկան 10 անվճար մուտքի հնարավորություն, յուրաքանչյուր հաջորդ այցը՝ 20 000 ՀՀ դրամ**
Ճանապարհորդության ապահովագրության վճար (տարեկան)	–	–	**Վճար չի կիրառվում**
Միջազգային կոնսիերժ ծառայության վճար[19]	–	**Վճար չի կիրառվում**	**Վճար չի կիրառվում**

Քարտային ծառայությունների լրացուցիչ պայմանների և դրանց օգտագործման անվտանգության վերաբերյալ մանրամասն տեղեկատվության համար այցելեք հետևյալ հղումով՝ Քարտային ծառայությունների տրամադրման պայմաններ:

Բանկի կրեդիտային քարտերով հասանելի զեղչերին և հատուկ առաջարկներին ծանոթանալու համար այցելեք հետևյալ հղումով՝ Զեղչեր - HSBC AM:

Վարկային գծի մարման կարգը

Կրեդիտային քարտի վարկային գծի օգտագործման հետևանքով վճարման ենթակա գումարը Հաճախորդը պետք է վճարի Բանկի կողմից տրամադրված ամսական քաղվածքի համաձայն՝ վճարելով քաղվածքում նշված վճարման ենթակա գումարը ամբողջությամբ կամ մասնակի (առնվազն քաղվածքում նշված նվազագույն վճարի չափով): Վարկային գծի մարման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Քարտային ծառայությունների տրամադրման պայմանների 4-րդ բաժնում:

[18] **LoungeKey ծառայությունը յուրաքանչյուր օրացուցային տարում՝ հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ, հիմնական և հավելյալ քարտապանների համար նախատեսում է 10 անվճար մուտքի հնարավորություն աշխարհի ավելի քան 1100 օդանավակայանների բիզնես սպասասրահներ:** Տվյալ օրացուցային տարվա ընթացքում չօգտագործված անվճար մուտքի հնարավորությունը չի փոխանցվում հաջորդ տարի: Եթե քարտապանը տվյալ օրացուցային տարվա ընթացքում օգտվում է 10 անվճար մուտքի հնարավորությունից, ապա հաջորդող մուտքերը հնարավոր են համապատասխան վճարումը կատարելու դեպքում: Օդանավակայանների սպասասրահներ այցելելուց առաջ խնդրում ենք ծանոթանալ տվյալ սրահ այցելության պայմաններին և այլ մանրամասներին Lounge Key ինտերնետային կայքում կամ հավելվածում:

[19] Ծառայության վերաբերյալ մանրամասների համար այցելեք Բանկի ինտերնետային կայքի «Միջազգային կոնսիերժ ծառայություն» բաժինը:

Միջազգային Visa Plus բանկոմատային քարտեր

Սակագներ և այլ պայմաններ	
Քարտի թողարկամն վճար	**Վճար չի կիրառվում**
Քարտի սպասարկման ամսական վճար	
• Ֆիզիկական անձինք	**Վճար չի կիրառվում**
• Կազմակերպություններ[20] /անհատ ձեռնարկատերեր	1 000 ՀՀ դրամ
Հավելյալ քարտի թողարկում	3 000 ՀՀ դրամ
Հավելյալ քարտի սպասարկման վճար	
• Ֆիզիկական անձինք (տարեկան)	6 000 ՀՀ դրամ
• Կազմակերպություններ/անհատ ձեռնարկատերեր (ամսական)	1 000 ՀՀ դրամ
Քարտի վերաթողարկում[21]	3 000 ՀՀ դրամ
Բանկում սպասարկվող հաշիվների միջև Բանկի բանկոմատով փոխանցման վճար	**Վճար չի կիրառվում**
Բանկում սպասարկվող հաշիվների միջև բանկոմատով փոխանցման օրական սահմանաչափ ՀՀ դրամով	
• Ֆիզիկական անձինք	1 000 000 ՀՀ դրամ
• Կազմակերպություններ/անհատ ձեռնարկատերեր	3 000 000 ՀՀ դրամ
Կանխիկացման վճար Բանկի բանկոմատներից	**Վճար չի կիրառվում**
Կանխիկացման վճար այլ բանկերի բանկոմատներից (ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս) [22]	2 000 ՀՀ դրամ
Կանխիկացման օրական սահմանաչափ ՀՀ դրամով	
• Ֆիզիկական անձինք	500 000 ՀՀ դրամ
• Կազմակերպություններ/անհատ ձեռնարկատերեր	500 000 ՀՀ դրամ
Բանկոմատով կանխիկի մուտքագրման օրական սահմանաչափ ֆիզիկական անձանց համար	1 000 000 ՀՀ դրամ

[20] **Կազմակերպությունների համար թողարկվող առաջին երեք կորպորատիվ բանկոմատային քարտերը տրամադրվում են անվճար, չորրորդ քարտից սկսած՝ յուրաքանչյուր քարտի համար գանձվում է հավելյալ քարտի թողարկման վճար:**

[21] **Ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր Հաճախորդների համար Օնլայն կամ Հեռախոսային բանկային ծառայության միջոցով քարտի վերաթողարկումը կատարվում է անվճար:** Քարտը կտրամադրվի Ձեր նախընտրած մասնաճյուղում կամ Ձեր կողմից նշված հասցեով դիմումի ստացման օրվանից 3-5 աշխատանքային օրվա ընթացքում

[22] **Ամերիաբանկին պատկանող բանկոմատներից կանխիկացման դեպքում վճար չի կիրառվում:**

Նշումներ

- Քարտի հաշվի արժույթը նույնն է, ինչ այն հիմնական հաշվի արժույթը, որին կցված է քարտը:
- Մեկ բանկոմատային քարտին կարող եք կցել մինչև 3 հաշիվ: Կախված տվյալ երկրում բանկոմատի տեխնիկական առանձնահատկություններից՝ գումար կանխիկացնելիս հնարավոր է հասանելի լինի միայն առաջնային հաշիվը:
- Նախքան քարտն արտերկրում օգտագործելն անհրաժեշտ է կատարել առնվազն մեկ գործարք Բանկի բանկոմատներից որևէ մեկով:
- Բանկոմատային քարտը նախատեսված է բանկոմատների միջոցով կանխիկ գործարքներ իրականացնելու համար:
- Բանկոմատների ցանկին ծանոթանալու համար այցելեք Բանկի ինտերնետային կայքը հետևյալ հղումով՝ www.hsbc.am:

Օվերդրաֆտ

Հասանելի է միայն ֆիզիկական անձ Հաճախորդներին:

Օվերդրաֆտի գումար և արժույթ	50 000 - 2 000 000 ՀՀ դրամ
Օվերդրաֆտի ժամկետ	Անժամկետ
Սպասարկման և տրամադրման վճարներ	**Չի կիրառվում**
Տոկոսադրույք	Տարեկան անվանական տոկոսադրույք՝ 16% Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 17.23%
Ամսական վճարման ենթակա գումար և վճարման օր	• **Վճարման չափը՝** օգտագործված գումարի առնվազն **10%-ը** և սահմանաչափը գերազանցող մասը (առկայության դեպքում) • **Վճարման օրը՝** քաղվածքի տրամադրումից հետո **5** օրվա ընթացքում
Արտոնյալ ժամկետ և տոկոսագումարի գանձման կարգ	**Արտոնյալ ժամկետ չի կիրառվում** Օվերդրաֆտի գծով տոկոսագումարի հաշվեգրումը սկսվում է սահմանաչափի օգտագործման պահից և հաշվեգրվում է միայն փաստացի օգտագործված գումարի դիմաց: Հաշվեգրված տոկոսագումարները գանձվում են օվերդրաֆտի հաշվից քաղվածքի ձևավորման օրը:
Վճարման ուշացման տուժանք	**Օվերդրաֆտի ամսական վճարման ուշացման դեպքում տուժանք չի կիրառվում:**
Սահմանաչափի գերազանցման տուժանք	**Օվերդրաֆտի տրամադրված սահմանաչափը գերազանցող գումարի վրա կիրառվում է 24% տարեկան անվանական տոկոսադրույք:**

Օվերդրաֆտի մարման կարգը

Հաճախորդին յուրաքանչյուր ամիս տրամադրվում է քաղվածք, որտեղ արտացոլվում է Օվերդրաֆտի սահմանաչափից ընթացիկ ամսվա օգտագործված գումարի չափը, հաշվեգրված տոկոսագումարը և վճարման ենթակա նվազագույն գումարը:

Վճարման ենթակա ամսական նվազագույն գումարը գանձվում է ավտոմատ կերպով օվերդրաֆտին կցված հաշվից վճարման օրը կամ օվերդրաֆտի հաշվին փոխանցում կատարելով քաղվածքի տրամադրումից մինչև վճարման օրն ընկած ժամանակահատվածում:

Ցանկացած մուտքային գործարք Օվերդրաֆտի հաշվին քաղվածքի տրամադրման և վճարման օրերի միջակայքում կուղղվի նվազագույն գումարի մարմանը, եթե այդպիսին առկա է: Վերջինս մարելուց հետո փոխանցված գումարի տարբերությունը կուղղվի հաջորդ ամսվա նվազագույն գումարի մարմանը, եթե այդպիսին առկա լինի:

Սահմանված ժամկետում հաճախորդի կողմից վճարումը չկատարվելու դեպքում Բանկն իր հայեցողությամբ կարող է կատարել մարման ենթակա գումարների գանձում Հաճախորդի՝ Բանկում գործող այլ հաշվից:

Օվերդրաֆտի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ներկայացված է հետևյալ հղմամբ՝ Պայմաններ | HSBC AM:

Վարկային գծի/օվերդրաֆտի տոկոսադրույքը

Վարկային գծի/օվերդրաֆտի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկային գիծը/ օվերդրաֆտը Ձեզ համար տոկոսագումարները և վարկային գծի/ օվերդրաֆտի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները (առկայության դեպքում) սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԻՆ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՅՑԵԼԵ՛Ք ԲԱՆԿԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ՝ Տոկոսագումարների և տոկոսադրույքների հաշվարկման կարգը:

Պարտավորությունների չկատարման դեպքում հնարավոր բացասական հետևանքների մասին տեղեկատվություն

ՎԱՐԿԱՌՈՒԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ/ՕՎԵՐԴՐԱՖՏԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՅԴ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ ԵՎ ԱԲՌԱ ՔՐԵԴԻՏ ՌԵՖՈՐԹԻՆԳ ՓԲԸ՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԱՆՑ ԴԱՌՆԱԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ՈՐԸ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԵՎ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՄԵԿ ԱՅԼ ՎԱՐԿԻ ԴԻՄԵԼԻՍ: ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿԻՐԱՌԵԼԻ Է ՆԱԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

Կրեդիտային քարտի վարկային գծի պարտավորությունը ժամանակին չկատարելու դեպքում սահմանվում է նաև վճարման ուշացման տուգանք, որը ներկայացված է տվյալ քարտատեսակի հիմանական պայմաններում:

Տեղեկատվություն երաշխավորի համար

Երաշխավորություն տրամադրելիս երաշխավորը պետք է գիտակցի երաշխավորության տրամադրման հետևանքները, այդ թվում՝ պարտապանի կողմից իր պարտավորությունը չկատարելու դեպքում պարտավորության, տույժերի ու տուգանքների ամբողջական կատարումը երաշխավորի կողմից, վարկառուի կողմից իր պարտավորությունը չկատարելու դեպքում երաշխավորի վարկային պատմության վատանալը, ընդհուպ մինչև երաշխավորի գույքից զրկվելը:

Եթե վարկատուի նկատմամբ ունեք չմարված պարտավորություն, ապա Ձեր կողմից պարտավորությունները կատարելու դեպքում մարումներն իրականացվում են հետևյալ հերթականությամբ.

1. **Տուժանք**
2. **Տոկոսագումարներ**
3. **Մայր գումար**

Կարևոր նշում

Հաշվի առնելով, որ վարկային գիծը/օվերդրաֆտը տրամադրվում է անժամկետ՝ Հաճախորդն իրավունք ունի ցանկացած պահի դիմել Բանկին օվերդրաֆտը/վարկային գիծը փակելու համար՝ մարելով Օվերդրաֆտի/կրեդիտային քարտի վարկային գծի կուտակված պարտքը:

Բանկն իրավունք ունի ժամանակ առ ժամանակ միակողմանիորեն վերանայել Օվերդրաֆտի/կրեդիտային քարտերի միջոցով տրամադրվող ծառայությունները և արտոնությունները, փոփոխել սակագները, ինչպես նաև տոկոսադրույքները՝ Ձեզ այդ մասին նախապես տեղեկացնելով (նշելով փոփոխության չափը և փոփոխության համար հիմք հանդիսացած չափանիշը) Բանկի՝ Ձեզ հետ համաձայնեցված եղանակով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

Վարկային գծի/օվերդրաֆտի անվանական տոկոսադրույքի փոփոխման նախադրյալ կարող են հանդիսանալ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվող բանկային տոկոսի հաշվարկային դրույքի փոփոխությունը, հայկական դրամի փոխարժեքի տատանումները, բանկային նոր տեխնոլոգիաների ներդրումը, ինչպես նաև ֆինանասական շուկայում տեղի ունեցող այլ փոփոխություններ, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ծառայության գնագոյացման վրա:

Բանկի կողմից պատշաճ կերպով ծանուցում ստանալուց հետո Հաճախորդը պարտավոր է ղեկավարվել փոփոխված պայմաններով, քանի դեռ նախքան այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելը վարկային գիծը չեղարկելու նպատակով չի դիմել Բանկին: Փոփոխված պայմաններին համաձայն չլինելու դեպքում Հաճախորդն իրավունք ունի առանց տուգանքների մարել Օվերդրաֆտի/կրեդիտային քարտի վարկային գծի կուտակված պարտքը՝ պայմանով, որ մինչև վարկային գծի/օվերդրաֆտի չեղարկումը նվազագույն վճարը կատարվել է համաձայն քաղվածքի:

Վարկավորման անհրաժեշտ պայմանները

Վարկային գիծը/օվերդրաֆտը տրամադրվում է, եթե Հաճախորդը ՀՀ ռեզիդենտ[23] է, և բավարարված են հետևյալ պայմանները[24] `

Աշխատավարձային Հաճախորդներ	◆ Բանկում հաշվի առկայություն ◆ Առնվազն 3 ամիս աշխատանքային փորձ ներկայիս գործատուի մոտ ◆ Ամսական զուտ աշխատավարձը նվազագույնը 50,000 ՀՀԴ է, իսկ ամսական ընդհանուր եկամուտը՝ 100 000 ՀՀԴ Կամ ◆ ՀՀ այլ բանկում հաշվի առկայություն ◆ Առնվազն 3 ամիս աշխատանքային փորձ որևէ կազմակերպությունում ◆ Ամսական զուտ աշխատավարձը նվազագույնը 150,000 ՀՀԴ է	**Վարկային գծի առավելագույն չափ[25]** Զուտ աշխատավարձի մինչև քառապատիկը
Ոչ աշխատավարձային Հաճախորդներ	◆ Առնվազն 3 ամսվա պատշաճ բանկային պատմություն Բանկում ◆ Հաշիվների վերջին 3 ամիսների միջին ամսական մնացորդը, ինչպես նաև վերջին ամսվա միջին մնացորդը կազմում են նվազագույնը 100,000 ՀՀ դրամ (կամ համարժեքն այլ արժույթով) Կամ ◆ Առնվազն 3 ամսվա պատշաճ բանկային պատմություն ՀՀ այլ բանկում ◆ Հաշիվների վերջին 3 ամիսների միջին ամսական մնացորդը, ինչպես նաև վերջին ամսվա միջին մնացորդը կազմում են նվազագույնը 250,000 ՀՀ դրամ (կամ համարժեքն այլ արժույթով)	Հաշվի վերջին 3 ամիսների միջին ամսական մնացորդի և վերջին ամսվա միջին մնացորդի մեծություններից նվազագույնի մինչև քառապատիկի չափով Հաշվի վերջին 3 ամիսների միջին ամսական մնացորդի և վերջին ամսվա միջին մնացորդի մեծություններից նվազագույնի մինչև կրկնապատիկի չափով

Անհրաժեշտության դեպքում աշխատավարձը Բանկում սպասարկվող հաշվին փոխանցելու հետ կապված մանրամասներին կարող եք ծանոթանալ վարկի հաստատման գործընթացի ժամանակ:

[23] **ՀՀ ռեզիդենտ են համարվում այն անձինք, ովքեր առնվազն մեկ տարի բնակվում են ՀՀ-ում՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:**
[24] **Վարկային գիծը/օվերդրաֆտը տրամադրվում է 18-ից մինչև 65 տարեկան անձանց:**
[25] **Վարկային գծի/օվերդաֆտի չափը ենթակա է հաստատման՝ ելնելով Բանկի կողմից սահմանված վարկարժանության գնահատման չափանիշներից:**

Պահանջվող փաստաթղթեր

- Վարկի դիմում
- Նույնականացման քարտ կամ անձը հաստատող այլ փաստաթղթի և հանրային ծառայությունների համարանշի վերաբերյալ այլ փաստաթղթի[26] բնօրինակներ
- Եկամուտների առկայությունը հավաստող փաստաթղթեր (տեղեկանք աշխատանքի և աշխատավարձի վերաբերյալ, բանկային հաշվի (հաշիվների) քաղվածք(ներ), առավել մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Բանկի պաշտոնական կայքէջում՝ www.hsbc.am)

Բոլոր փաստաթղթերը ներկայացվում են առձեռն Բանկի մասնաճյուղերում կամ էլեկտրոնային ձևով Բանկի հետ համաձայնեցված ժամկետներում:

Անհրաժեշտության դեպքում Բանկի կողմից կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:

Վարկային գծի/օվերդրաֆտի տրամադրում

- Վարկային գծի/ օվերդրաֆտի տրամադրման դիմումն ընդունվում է Բանկի ցանկացած մասնաճյուղում կամ հեռահար Բանկի պաշտոնական կայքէջի միջոցով:
- Բանկը վարկային գիծ/ օվերդրաֆտ տրամադրելու որոշումը կայացնում է իր հայեցողությամբ՝ հաշվի առնելով վարկային հայտի համապատասխանությունը տվյալ վարկատեսակի հայտարարված պայմաններին, ինչպես նաև գնահատելով այնպիսի էական հանգամանքներ, ինչպիսիք են՝ Հաճախորդի վարկարժանությունը, ժամկետանց պարտավորությունների առկայությունը և այլն:
- Բանկը վարկային հայտի վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում և որոշման մասին Հաճախորդին տեղեկացնում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո առավելագույնը մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Հաճախորդի նախընտրած եղանակով:
- Վարկային գիծը/ օվերդրաֆտը Հաճախորդին տրամադրվում է պայմանագիրը ստորագրելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:
- Վարկային գիծը/ օվերդրաֆտը տրամադրվում է անկանխիկ:
- Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ դադարեցնել օվերդրաֆտի/կրեդիտային քարտի պայմանագիրը և պահանջել օվերդրաֆտի/կրեդիտային քարտի վարկային գծի օգտագործված մասի և հաշվեգրված տոկոսագումարների ամբողջական մարում:

ՆԱԽՔԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԲԱՆԿԸ ՁԵՌ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՕՎԵՐԴՐԱՖՏԻ/ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՔԱՐՏԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ: ՎԵՐՋԻՆՍ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՕՎԵՐԴՐԱՖՏԻ/ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

[26] Սոցիալական ապահովության քարտ, հանրային ծառայությունների համարանիշ չունենալու/ստանալու վերաբերյալ լիազոր մարմնի կողմից տրամադրված տեղեկանք:

Վարկային գծի/օվերդրաֆտի տրամադրման վերաբերյալ դրական որոշման կայացման չափանիշներ

- Փաստաթղթավորված կայուն եկամուտ, որը համապատասխանում է տվյալ վարկատեսակի տրամադրման նվազագույն պահանջներին
- Դրական վարկային պատմություն, ըստ որի՝ վերջին 12 ամիսների ընթացքում Հաճախորդի բոլոր վարկերի գծով ուշացումների քանակը չպետք է գերազանցի Բանկի կողմից տվյալ պահին սահմանված առավելագույն շեմը
- Վարկային գործընթացի համար անհրաժեշտ լիարժեք փաստաթղթեր

Վարկային գծի/օվերդրաֆտի տրամադրման վերաբերյալ բացասական որոշման կայացման չափանիշներ

- Վարկային գծի/ օվերդրաֆտի մարելու համար անբավարար կամ չփաստաթղթավորված եկամուտներ
- Վարկային գծի/ օվերդրաֆտի ոչ նպատակային օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն
- Հաճախորդի կողմից ոչ արժանահավատ տվյալների տրամադրում
- Վարկային գործընթացի համար անհրաժեշտ լիարժեք փաստաթղթերի բացակայություն
- Բացասական վարկային պատմություն, ըստ որի՝ վերջին 12 ամիսների ընթացքում Հաճախորդի բոլոր վարկերի գծով ուշացումների քանակը գերազանցում է Բանկի կողմից տվյալ պահին սահմանված առավելագույն շեմը
- Հաճախորդի տարիքը չի համապատասխանում տվյալ վարկատեսակի տրամադրման համար Բանկի կողմից սահմանված չափանիշին

Կարևոր Նշումներ

- Հաճախորդների վարկային հաշիվների համար Բանկը վերջիններիս տրամադրում է համապատասխան քաղվածքներ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: Հաճախորդները քաղվածքները կարող են ստանալ իրենց փոստային հասցեով կամ էլեկտրոնային փոստով: **Օվերդրաֆտի/ կրեդիտային քարտերի քաղվածքների և դրանց կրկնօրինակների տրամադրման համար վճար չի կիրառվում:** Անկախ նախընտրած հաղորդակցման եղանակից՝ Հաճախորդները պարտադիր ներկայացման տեղեկատվությունը կարող են ստանալ նաև առձեռն Բանկի ցանկացած մասնաճյուղում: Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանների, ժամկետների և սակագների վերաբերյալ տեղեկություններին կարող եք ծանոթանալ Բանկի՝ «Ծառայությունների Սակագներ» տեղեկատվական ամփոփագրում կամ Բանկի ինտերնետային կայքում՝ այցելելով հետևյալ հղմամբ՝ Ծառայությունների Սակագներ:
- Բանկը կարող է Հաճախորդի վերաբերյալ տեղեկություններ հավաքագրել և տրամադրել HSBC ԽՄբի մեջ մտնող ընկերություններին և օտարերկրյա իրավասու մարմիններին՝ ֆինանսական հանցագործությունների ռիսկի կառավարման գործողությունների և հարկային համապատասխանության պարտավորություններն ապահովելու նպատակով՝ հիմք ընդունելով նաև համապատասխան միջազգային կարգավորումները: Նշված տեղեկությունների հավաքագրման և օգտագործման կարգը և պայմանները սահմանվում են Հիմնական Պայմաններին որպես Հավելված կցվող և Հիմնական Պայմանների անբաժանելի մասը կազմող «Ֆինանսական հանցագործության ռիսկի կառավարման գործողությունների և հարկային համապատասխանության կապակցությամբ Հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման և օգտագործման պայմաններ» փաստաթղթով: Վերոնշյալ կարգավորումներից է «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտը» (ՕՀՀՀԱ), որն ուժի մեջ է մտել 2014 թ. հուլիսի 1-ից: Այս օրենսդրական ակտը, որի կիրառումն ապահովվում է Միացյալ Նահանգների կառավարության կողմից, ուղղված է հարկային համապատասխանության խրախուսմանը՝ կանխարգելելով, որ ԱՄՆ քաղաքացիներն իրենց եկամուտների և ակտիվների հարկումից խուսափելու նպատակով օգտվեն ոչ ամերիկյան ֆինանսական կազմակերպություններից և օտարերկրյա ձեռնարկություններից:
- Համաձայն Բանկի գործունեության սկզբունքների, ներքին կանոնակարգերի և «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև միջազգային պատժամիջոցների հիման վրա ընդունված ներքին իրավական ակտերի պահանջների՝ Բանկն իրավունք ունի կասկածներ ունենալու դեպքում իր նախաձեռնությամբ ցանկացած հարցում կատարելու (այդ թվում՝ բանավոր) կամ պահանջելու լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր:
- Հաճախորդն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու կրեդիտավորման պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե կրեդիտավորման պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ:
- **Դուք իրավունք ունեք հաղորդակցվել մեզ հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով:**

Կարևոր տեղեկատվություն վարկային պատմության վերաբերյալ[27]

Ի՞նչ է վարկային պատմությունը և ինչպե՞ս է ձևավորվում

Վարկային պատմությունն անձի կողմից ստանձնած պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունն է, որը ցույց է տալիս, թե Հաճախորդն ինչպես է կատարել և շարունակում կատարել իր բոլոր ֆինանսական պարտավորությունները: Այն ձևավորվում է ԱՔՌԱ վարկային բյուրոյի անդամ կազմակերպություններից ստացված տվյալների հիման վրա: Վարկային պատմությունը, որպես կանոն, օգտագործվում է ֆինանսական կազմակերպությունների կողմից վարկերի տրամադրման վերաբերյալ որոշում կայացնելու ընթացքում:

Ի՞նչ տեսակի և ի՞նչ վաղեմության տեղեկատվություն է պարունակում վարկային պատմությունը

Վարկային պատմությունը պարունակում է անձի ֆինանսական պարտավորությունների և դրանց կատարման վերաբերյալ հարցման պահին նախորդող 5 տարվա ընթացքում հավաքագրված տեղեկությունները, ինչպիսիք են օրինակ՝

- ստացած վարկերը, դրանց քանակը և գումարը, յուրաքանչյուր վարկի տեսակը և ժամկետը,
- վարկային պարտավորությունների կատարումը (օրինակ՝ արդյո՞ք ժամանակին եք կատարել տոկոսների ու մայր գումարի մարումները, թե՝ ոչ),
- տրամադրված երաշխավորությունները,
- ժամկետանց վարկերի առկայությունը, ինչպես նաև դրանց համար սահմանված տույժերն ու տուգանքները:

Անհրաժեշտ գործողություններ՝ սխալ կամ թերի վարկային պատմությունը փոփոխելու համար

Վարկային պատմության մեջ սխալ կամ թերի տվյալների առկայության դեպքում վարկառուն կարող է դիմել ԱՔՌԱ վարկային բյուրոյին պարզաբանման և վարկային պատմությունում ներառված տեղեկատվության ուղղման նպատակով:

Անհրաժեշտ գործողություններ՝ վարկային պատմության վատթարացումից խուսափելու և վարկային պատմության բարելավման համար

Վարկային պատմության վատթարացումից խուսափելու և վարկային պատմության բարելավման համար անհրաժեշտ է.

- պատշաճ կերպով և ճիշտ ժամանակին կատարել վարկային պարտավորությունները,
- բացառել ընթացիկ վարկերի գծով պարտավորությունների կատարման ուշացումները,
- ամբողջությամբ մարել նախկինում առաջացած ժամկետանց վարկային պարտավորությունները,
- խուսափել խնդրահարույց վարկային պատմություն ունեցող անձանց համար երաշխավոր դառնալուց:

[27] Առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող եք այցելել հետևյալ հղումներով՝ abcfinance.am և acra.am:

Հավելյալ տեղեկությունների, ինչպես նաև այլ ֆինանսական հաստատությունների կողմից առաջարկվող նմանատիպ ծառայությունները համեմատելու համար կարող եք այցելել նաև «Ձեր ֆինանսական տեղեկատուն» կայքէջը հետևյալ հղումով՝ www.fininfo.am:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

© «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, 2024:

Բոլոր իրավունքները պահպանված են: